մուր պահելով բնութիւնս իւր, զի ոչ անցանէր պատուիրանաւ Տեառն, այսու հաստատել կարէ միտս ընթերցողաց զի սկզբանէ արարածոց ոչ ոք ստեղծեալ գտաւ իշխանութիւն, զի իշխեսցէ 'ի վերայ բանական հոգւոյ և բանական բնութեան մերոյ, եթէ ոչ անսկիզբն և անեղն միայն արարիչն մեր Աստուած, զի ծանիցէ աշխարհ և ամենայն արարածք երկնի և երկրի զի նա միայն ինքն է արարիչ և Տէր և Աստուած ամենայն արարածոց, ուրեմն որպէս 'ի վեր ասացաք բաւական լիցի սղալանօք ձկտել զմիտս մեր աւելի քանթէ կարն մեր և աւելի քանթէ այն, որ 'ի վերուստ մեզ տուել է, վասն որոյ մի ոք ձկտեսցէ միտս իւր զի թագաւորեսցէ 'ի վերայ բանական բնութեան մարդոյ որ մեղկ մեծ է, քանզի թագաւորել 'ի վերայ բանական բնութեան մարդոյ միմիայն գործ յԱստուծոյ է, որպիսի և կամ յերբ և կամ որքան ժամանակաւ՝ միմիայն Աստուծոյ միայնոյ գիտելի. մի ոք մարդ լրբանալով ձկտեսցէ զկամ իւր Աստուածանալոյ, այսինքն թագաւորելոյ 'ի վերայ բանական բնութեան մերոյ, որում խոստովանիմ ես և խոստովանի ամենայն բնութիւն մարդոյ, որ ոչ կարէ նա հասանիլ սղալացեալ ցանկութեան սրտի իւրոյ, եթէ ոչ անդրադարձն սորայ աւերէ հոգի և մարմին իւր անկարգութեամբ շարժմամբ իւրով անցանելով պատուիրանաւն Տեառն իւրոյ և պատճառ լինելով